

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Մարտունի, Շահումյան 2,
Հեռ. 060-74-34-01

N 339

16 ապրիլի 2018թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԲՈԹՈՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Բոթոյան*

Ձեզ ենք ներկայացնում Մարտունի համայնքի ավագանու 10.04.2018թ. նիստի արձանագրությունը և որոշումները:

Առդիր՝ 46 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

կատարող
Գ. Ոսկանյան

# *ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ -6*

*ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10–Ը ՄԱՐՏԻ 2018Թ. ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ:*

*Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու 13 անդամներից 9-ը՝* ՎԱՐԴԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ԱՐՏԱԿ ԳԱԼՍՏՅԱՆ, ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ, ՍԵՐԳՈ ԵՂՈՅԱՆ, ԱՐՏԱԿ ԶԻՐՈՅԱՆ,ՍԵՎԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ԱՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

*Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ա.Ավետիսյանը*
*Քարտուղարությամբ՝ Գ.Ոսկանյանի*

## *Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ*

ՀԱՐՑ-46.ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.03.2018Թ. ԹԻՎ 18-ԻՑ ԹԻՎ 36 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ 28.03.2018Թ. ԹԻՎ 37-ԻՑ ԹԻՎ 45 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-47. ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.12.2017Թ. «2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 91-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-48.ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.12.2017Թ.«ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 89-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-49.ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՂԲԱՄԱՆՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՍԱՆՄԱՐ» ՍՊԸ-ԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ- 50. ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.02.2017Թ. «ՄԱՐՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 17 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-51. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.12.2017Թ.«2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 92-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-52. «ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-53. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.11.2016Թ. «ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 95 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-54. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21.12.2016Թ.«ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿՆ ՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 109 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-55. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21.12.2016Թ. «ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿՆ ՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 110 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-56. ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-57. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՋՐԱՆՑՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՋՐԱՆՑՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՋՐԱՆՑՔՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-58. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.11.2016Թ «ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 93 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-59. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 01.02.2018Թ. «ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 14 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-60. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-61. 22 ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 05.04.2016Թ. ԿՆՔՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-62.ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-63. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-64. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՎՈՐԳ ՉԻՐՈՅԱՆ, ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ, ԹՈՒՄԱՆՅԱՆ,ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՄԱՅԹԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-65.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-66. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-67. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿՆՔՎԵԼԻՔ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԻՋՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-68. ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԹՎՈՎ 4 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՒՅՔԻ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-69.ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 01.02.2018Թ.«ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 14 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌԻՑ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-70.ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԽԱՉԻԿ ՍԱՀԱԿԻ ԿԶԼՅԱՆԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-71. 05-003-0065-0010 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,072 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՄՎԵԼ ԼԵՎՈՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-72. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.12.2017Թ.« ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 89-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-73.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ք. ՄԱՐՏՈՒՆԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 15 ՀԱՍՑԵԻ 620,7 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՄԵԿ ՀԱՐԿԱՆԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ ԱՅԴ ՇԵՆՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-74. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

Մարտունի համայնքի ավագանին որոշեց հաստատել նիստի օրակարգը՝
Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

| | |
|---|---|
| Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | Ա.ԶԻՐՈՅԱՆ |
| Ա.ԳԱԼՍՏՅԱՆ | Ա.ՄԵԼԻՔՅԱՆ |
| Վ.ԴԱՎԹՅԱՆ | Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ |
| Ս.ԵՂՈՅԱՆ | Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## *ՈՐՈՇՈՒՄ N 46*

*« 10 »-ը ապրիլի 2018թ.* *ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.03.2018Թ. ԹԻՎ 18-ԻՑ ԹԻՎ 36 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ 28.03.2018Թ. ԹԻՎ 37-ԻՑ ԹԻՎ 45 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ Վ.Տերտերյանի գրությունը, նկատի ունենալով որ Մարտունի համայնքի ավագանու 13.03.2018թ. թիվ 18-ից թիվ 36 որոշումները եվ 28.03.2018թ. թիվ 37-ից թիվ 45 որոշումները օրենքի թյուր ըմբռնման պատճառով կայացվել են առանց ավագանու անդամների քվորումի ապահովման և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի պահանջներով

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>*

Չեղյալ ճանաչել Մարտունի համայնքի ավագանու 13.03.2018թ. թիվ 18-ից թիվ 36 որոշումները եվ 28.03.2018թ. թիվ 37-ից թիվ 45 որոշումները:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝
Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ԳԱԼՍՏՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ
Ս.ԵՂՈՅԱՆ
Ա.ՋԻՐՈՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Տ.ԱՍԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 47*

*« 10 »-ը ապրիլի 2018թ.* *Ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.12.2017Թ. «2018Թ-Ի ՀԱՄԱՐ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 91-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով.*

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>*

Մարտունի համայնքի ավագանու 07.12.2017թ. «2018թ-ի համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » թիվ 91-ն որոշման 2-րդ կետը «2.1-4 » թվերից հետո լրացնել «2.1-2» թվերով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

| | |
|---|---|
| Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | Ա.ՋԻՐՈՅԱՆ |
| Ա.ԳԱԼՍՏՅԱՆ | Ա.ՄԵԼԻՔՅԱՆ |
| Վ.ԴԱՎԹՅԱՆ | Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ |
| Մ.ԵՂՈՅԱՆ | Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 48*

*« 10 »-ը ապրիլի 2018թ.* *ք. Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.12.2017Թ.«ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 89-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով.*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է*

Մարտունի համայնքի ավագանու 07.12.2017թ.«Մարտունի համայնքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 89-ն որոշմամբ հաստատված տեղական վճարների ցանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ 30-րդ կետով.
«30.Համայնքին սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ սահմանել փոխհատուցման գումարի չափով»:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ա.ՋԻՐՈՅԱՆ

Ա.ԳԱԼՍՏՅԱՆ Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Վ.ԴԱՎԹՅԱՆ Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Մ.ԵՂՈՅԱՆ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 49*

*« 10 »-ը ապրիլի 2018թ.* *Ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՂԲԱՄԱՆՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՍԱՆՄԱՐ» ՍՊԸ-ԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է*

1. Ստորև նշված տրանսպորտային միջոցները և աղբամանները անհատույց օգտագործման իրավունքով մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը հատկացնել «Սանմար» ՍՊԸ-ին:

| Հ/Հ | Անվանումը | Համ բնութագիրը | Թողար. տարեթիվը | Չափի միավորը | Քանակը | Փաստացի | Սկզբն.տվյալները | Հաշվարկային արժեքը | Տեխնիկական վիճակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Զիլ ՄՄԶ-555 481-US-16 | ինքնաթափ | 1986 | հատ | 1 | 1 | 785 000 | 0 | 2 անվադողերը 10%,4-ը 80%,մարտկոցը ենթակա է փոխման,փոխ.տուփը կիսամաշ վիճակում, մեքենան գտնվում է բարվոք վիճակում |
| 2 | Զիլ 433110 կօ 449-10 286ԼԼ70 | աղբատար | 2005 | հատ | 1 | 1 | 500 000 | 458 500 | 3 անվադողերը 70%,մեկը շահագործման պիտանի չէ,2-ը գտնվում են 30 %,մարտկոցը 1 տարվա շահագործմամբ.առկա է 5 զազաբալոն գործարանային արտադրության,ավտոմեքենան գտնվում է սարքին վիճակում |
| 3 | Զիլ 433110 կօ 449-10 287ԼԼ70 | աղբատար | 2005 | հատ | 1 | 1 | 600 000 | 550 200 | բացակայում է մարտկոցը,փոխանցման տուփը նոր է տեղադրված,առկա է 5 անվադող շահագործման ոչ պիտանի,թափքըն աղբ բարձող հենասարքը գտնվում են բարվոք վիճակում,առկա է 5 զազաբալոն |
| 4 | Զիլ ՄԴԿ 433362 599-US-16 | հ/բեռնատար ցիստեռն | 2008 | հատ | 1 | 1 | 13 239 200 | 0 | 5 անվադողերը լավ վիճակում են,առկա է 3 զազաբալոն գործարանային արտադրության,մեքենան գտնվում է սարքին վիճակում,մարտկոցը սարքին է,1 անվադողը շահագործման ոչ պիտանի |
| 5 | Զիլ- կօ 413 670 US-16 | հատուկ | 1982 | հատ | 1 | 1 | 1 500 000 | 0 | առջևի 1անվադողը 40 %, մնացած 5 անվադողերը լավ վիճակում են,3 զազաբալոն գործարանային ինքնաթափի բարձր ճնշման ,մխոցի սալիկները ենթակա են փոխման,մեքենան գտնվում է սարքին վիճակում |
| 6 | Դ.Զ. 11-013 | | 1987 | հատ | 1 | 1 | 16 266 | 0 | ենթակա է ընդ.վերանորոգման |
| | | Ընդամենը տրանսպորտային միջոցներ | | | 6 | 6 | 16640466 | 1008700 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մետաղյա աղբարկղ | 2008 | հատ | 40 | 40 | 1 800 000 | 0 | Միջին չափի |
| 2 | Մետաղյա աղբարկղ | 2008 | հատ | 30 | 30 | 1 449 900 | 0 | Ներկման և մասնակի նորոգման կարիք ունի |
| 3 | Մետաղյա աղբարկղ | 2009 | հատ | 1 | 1 | 48 330 | 0 | Ներկման և մասնակի նորոգման կարիք ունի |
| 4 | Մետաղյա աղբարկղ | 2010 | հատ | 20 | 20 | 900 000 | 0 | Ներկման և մասնակի նորոգման կարիք ունի |
| 5 | Երկաթյա աղբարկղեր | 2012 | հատ | 27 | 27 | 1 499 985 | 0 | Ներկման և մասնակի նորոգման կարիք ունի |
| 6 | Մետաղյա աղբարկղ | 2014 | հատ | 30 | 30 | 600 000 | 480 000 | 5-ը ենթակա է դուրս գրման վթարի պատճառով,10-ը նորոգման կարիք ունի |
| 6 | Աղբաման 50 լ | 2016 | հատ | 12 | 12 | 144 000 | 129 600 | |
| 8 | Աղբարկղ | 2016 | հատ | 5 | 5 | 310 000 | 279 000 | |
| 9 | Աղբարկղի կափարիչ | 2016 | հատ | 38 | 38 | 684 000 | 615 600 | |

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ա.ԶԻՐՈՅԱՆ

Ա.ԳԱԼՍՏՅԱՆ Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Վ.ԴԱՎԹՅԱՆ Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ս.ԵՂՈՅԱՆ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 50*

*« 10 »-ը ապրիլի 2018թ.* *Ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.02.2017Թ. «ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 17 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 16.01.2018թ. № 01/11/99-18 հանձնարարականը*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է*

Մարտունի համայնքի ավագանու 20.02.2017թ. «Մարտունի քաղաքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 17 որոշմամբ հաստատված Մարտունի համայնքի քաղաքաշինական կանոնադրության 7-րդ բաժնի նախաբանը լրացնել հետևյալ պարբերությամբ.
«Մարտունի համայնքի շենքերի և շինությունների տանիքների համար սահմանել հետևյալ երկու նախընտրելի գույները՝ 1. արծաթափայլ(159-51-33 3016), 2.շագանակագույն (172-185-202 7004) ծածկագրեր:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ԳԱԼՍՏՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ
Ս.ԵՂՈՅԱՆ
Ա.ԶԻՐՈՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 51*

*« 10 »-ը ապրիլի 2018թ.* *ք. Մարտունի*

## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.12.2017Թ.«2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 92-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով.*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*

*ՈՐՈՇՈՒՄ Է*

1.«2018թ-ի համար Մարտունի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 92-Ն որոշման «Մարտունի քաղաքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ- բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ կետով

| 2/2 | Հաստիքների անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը դրամ | Աշխատավարձ | *20 տոկոսը արձըկտնային* | *Ընդամենը* | Աշխատողների քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|
| *11* | *Դերձակ* | *0,25* | *72994* | *18250* | *3650* | *21900* | *1* |

2.«2018թ-ի համար Մարտունի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 92-Ն որոշման Մարտունու քաղաքային համայնքի «Մարտունու երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի 4-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ

| Հ/Հ | Հաստիքների անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը դրամ | Աշխատավարձ | *20 տոկոսաբարձրացումից հետո* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|
| *4* | *գրադարանավար* | *1,0* | *72944* | *8000* | *80944* | *1* |

3.«2018 թվականի համար Մարտունի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 92-Ն որոշման «Մարտունի քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ- բաժինը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

| Հ/Հ | Հաստիքների անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Աշխատա-վարձ | *20 տոկոս բարձրացումից հետո* | *Ընդամենը* | Աշխատողների քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|
| *1.* | *Տնօրեն* | *1* | *195000* | *195000* | *8000* | *203000* | *1* |
| *2.* | *Շագործման բաժնի պետ* | *1* | *122000* | *122000* | *8000* | *130000* | *1* |
| *3.* | *Հաշվապահ* | *1* | *117000* | *117000* | *8000* | *125000* | *1* |
| *4.* | *Հավաքարար* | *2* | *93000* | *186000* | *16000* | *202000* | *2* |
| *5.* | *Հատուկ մեքենայի վարորդ /ջրցան,փիշկա /* | *1* | *117000* | *117000* | *8000* | *125000* | *1* |
| *6.* | *Մեխանիզատոր / գրեյդերիստ/* | *1* | *142000* | *142000* | *8000* | *150000* | *1* |
| *7.* | *Ավագ բանվոր* | *2* | *132000* | *264000* | *16000* | *280000* | *2* |
| *8.* | *Էլեկտրիկ* | *1* | *92000* | *92000* | *8000* | *100000* | *1* |
| *9.* | *Գերեզմանոցի պատասխանատու* | *1* | *97000* | *97000* | *8000* | *105000* | *1* |
| *10.* | *Բանվոր /ծառայող/ սեզոնային* | *0* | *0* | *0* | *0* | *0* | *0* |
| | *Ընդամենը* | *11* | *1014000* | *1332000* | *88000* | *1420000* | *11* |

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա.ԳԱԼՍՏՅԱՆ

Վ.ԴԱՎԹՅԱՆ

Մ.ԵՂՈՅԱՆ

Ա.ՋԻՐՈՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 52*

*« 10 »-ը ապրիլի 2018թ.* *ք. Մարտունի*

«ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հաշվի առնելով «Մարտունի քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ -ի շենքում բնակվող քաղաքացիների խնդրանքը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 22 օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.*

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*

*<u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>*

Համաձայնություն տալ «Մարտունի քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ -ի շենքում բնակվող քաղաքացիների կողմից զբաղեցրած շենքային տարածքները նրանց օտարելու համար:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 0, դեմ՝ 8, ձեռնպահ՝ 0

Որոշումը չընդունվեց:

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա.ԳԱԼՍՏՅԱՆ

Վ.ԴԱՎԹՅԱՆ

Ս.ԵՂՈՅԱՆ

Ա.ԶԻՐՈՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 53*

*« 10 »-ը ապրիլի 2018թ.* *ք. Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.11.2016Թ. «ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 95 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով 22 Կառավարության 02.06.2016թ. № 631- Ն որոշմամբ հաստատված «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության» 12-րդ կետի «Իրավական ակտերի մասին» 22 օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*

*ՈՐՈՇՈՒՄ Է*

Մարտունի համայնքի ավագանու 14.11.2016թ. «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և նրա անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 95 որոշումը շարադրել նոր խմբագրությամբ
Մարտունու համայնքապետարանում ստեղծել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով հետևյալ կազմով.

1.Հովսեփ Տոնոյան – համայնքի ղեկավարի տեղակալ -նախագահ

2.Գագիկ Ոսկանյան –աշխատակազմի քարտուղար

3.Սեակ Կարապետյան – աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և ընդհանուր հարցերի բաժնի պետ

4.Լեռնիկ Ղազարյան – Մարտունու ոստիկանության բաժնի անչափահասների գործերի բաժնի աշխատակից

5. Համլիկ Ասլատուրյան - մանկավարժ

6. Շուշան Խաչատրյան -հոգեբան

7. Արայիկ Խաչատրյան -սոցիալական ծառայության բաժնի ներկայացուցիչ

8. Արա Մելիքյան-ավագանու անդամ

9.Արտակ Ջիրոյան -ավագանու անդամ

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա.ԳԱԼՍՏՅԱՆ

Վ.ԴԱՎԹՅԱՆ

Ս.ԵՂՈՅԱՆ

Ա.ՋԻՐՈՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 54*

*« 10 »-ը ապրիլի 2018թ.* *ք. Մարտունի*

## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21.12.2016Թ. «ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿՆ ՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 109 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի,«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.*

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>*

1. Մարտունի համայնքի ավագանու 21.12.2016թ.«Մարտունու համայնքապետարանի համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակն ու անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 109 որոշման 1-ին կետի «գ» ենթակետի «Վարազդատ Միկոյան» բառերը փոխարինել «Տիգրան Ստեփանյան» բառերով։

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

| | |
|---|---|
| Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | Ա.ՁԻՐՈՅԱՆ |
| Ա.ԳԱԼՍՏՅԱՆ | Ա.ՄԵԼԻՔՅԱՆ |
| Վ.ԴԱՎԹՅԱՆ | Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ |
| Մ.ԵՂՈՅԱՆ | Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 55*

*«10»-ը ապրիլի 2018թ.* *Ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21.12.2016Թ.ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿՆ ՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 110 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.*

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*

*<u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>*

Մարտունի համայնքի ավագանու 21.12.2016թ.«Մարտունու համայնքապետարանի համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակն ու անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 110 որոշման 1-ին կետի «գ» ենթակետի «Վարազդատ Միերյան» բառերը փոխարինել «Տիգրան Ստեփանյան» բառերով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ԳԱԼՍՏՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ
Ս.ԵՂՈՅԱՆ

Ա.ՋԻՐՈՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 56*

*« 10 »-ը ապրիլի 2018թ.* *Ք. Մարտունի*

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36 -րդ կետի պահանջներով.*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է*

1. Սահմանել, որ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետության տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքում անհրաժեշտ է կատարել տարածքին հարակից մայթի բարեկարգում, մայթի ամբողջական հատվածում տեղադրելով բազալտե սալիկներ, փոխելով քայքայված եզրաքարերը դրանց առկայության դեպքում, բարեկարգել և կանաչապատել իր անշարժ գույքին հարակից տարածքում գտնվող սիզամարգերը:
2. Կառուցապատողը նախապես կազմում է բարեկարգման նախագիծ և այն համաձայնեցնում է համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնի հետ:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝9, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ԳԱԼՍՏՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ
Ս.ԵՂՈՅԱՆ
Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ա.ՁԻՐՈՅԱՆ
Ա.ՄԵԼՔՅԱՆ
Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 57*

*Ք.Մարտունի*

*« 10»-ը ապրիլի 2018թ.*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՋՐԱՆՑՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՋՐԱՆՑՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՋՐԱՆՑՔՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 22 օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով.*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*

*ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Համաձայնություն տալ Մարտունի համայնքում ներտնտեսային ջրանցքների վերակառուցման ներդրումային ծրագրի իրականացման համար համաֆինանսավորման ձևով ներդրում կատարելու համար։

2.Սահմանել վերանորոգման ենթակա ներտնտեսային ջրանցքների հետևյալ ցանկը՝

ա/ Երևանյան փողոց

բ/ Դ.Անհաղթ փողոց

գ/ Պ.Սևակ փողոց

դ/ Վ.Մամիկոնյան փողոց

ե/ Գ.Նժդեհ փողոց

դ/Գ.Զիրոյան փողոց

3.Առաջարկված ջրանցքների մեջ առաջնահերթությունը տալ հետևյալ փողոցներով անցնող ջրանցքների վերանորոգմանը:

ա/ Երևանյան փողոց

բ/ Դ.Անհաղթ փողոց

գ/Վ.Մամիկոնյան փողոց

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝9, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա.ԳԱԼՍՏՅԱՆ

Վ.ԴԱՎԹՅԱՆ

Ս.ԵՂՈՅԱՆ

Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ա.ԶԻՐՈՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 58*

*« 10 »-ը ապրիլի 2018թ.* *Ք. Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.11.2016Թ «ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 93 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*

*ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Մարտունի համայնքի ավագանու 14.11.2016թ.«Մարտունի համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովների կազմը հաստատելու մասին» թիվ 93 որոշման 1-ին կետի 1-ին ենթակետից հանել Գևորգ Սարգսյանի անունը:

2. Մարտունի համայնքի ավագանու 14.11.2016թ. «Մարտունի համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովների կազմը հաստատելու մասին» թիվ 93 որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետից հանել Վարազդատ Միքայելյանի անունը:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝9, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ԳԱԼՍՏՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ
Ս.ԵՂՈՅԱՆ
Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ա.ՋԻՐՈՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 59*

*« 10 »-ը ապրիլի 2018թ.* *Ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 01.02.2018Թ. «ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 14 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32 -րդ կետի, 77-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով.*

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>*

1. Մարտունի համայնքի հողային հաշվեկշռում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա/ Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի չափը պակասեցնել օտարված հողամասերի չափով՝ 3502քմ-ով ,

բ/ Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի չափը ավելացնել սեփականաշնորհումից հրաժարված քաղաքացիների հողամասերի չափով՝ 2050 քմ խոտհարք և 14149 քմ վարելահող:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝9, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ԳԱԼՍՏՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ
Ս.ԵՂՈՅԱՆ
Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ա.ՁԻՐՈՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 60*

*« 10 »-ը ապրիլի 2018թ.* *Ք. Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» 22 օրենքի 10-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7 -րդ կետի պահանջներով.*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*

*ՈՐՈՇՈՒՄ Է*

Սահմանել Մարտունի համայնքի հետևյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման հետևյալ կարգը.

1. Սահմանել, որ համայնքի կամավոր խնդիրները այն խնդիրներն են, որոնցով համայնքային կյանքի բնականոն ընթացքը ուղղակիորեն պայմանավորված չէ և կարող են իրականացվել միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Սահմանել համայնքի հետևյալ կամավոր խնդիրները՝

1/Սոցիալական աջակցություն դրա կարիքն ունեցող անձանց

2/Օժանդակություն հանրակրթական դպրոցներին

3/ Աջակցություն համայնքում տնտեսական գործունեություն նախաձեռնողներին

4/ Համայնքի տարածքում հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում և կառավարում,

5/ Աջակցություն համայնքում երիտասարդական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերին և միջոցառումներին

2.Սահմանել , որ համայնքի լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից օրենքով պատվիրակված՝ պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով:

3. Սահմանել համայնքի կամավոր խնդիրների իրականացման հետևյալ կարգը.

3.1 Սոցիալական աջակցություն.

ա/ Սոցիալական աջակցության կարիք ունեցող քաղաքացիների կյանքի պայմանների և սոցիալական վիճակի ուսումնասիրության համար ստեղծել հանձնաժողով.

բ/Հանձնաժողովի կազմում ընդգրկել համայնքի ավագանու առնվազն 3 անդամի

գ/ Սոցիալական աջակցությունը տրամադրել միայն հանձնաժողովի կողմից կազմված ուսումնասիրության արձանագրության հիման վրա:

դ/ Սոցիալական աջակցության համար տրամադրվելիք գումարի չափը յուրաքանչյուր ընտանիքի համար սահմանել մինչև 50000 (հիսուն հազար) դրամ:

ե/ Սոցիալական աջակցության դիմումների ուսումնասիրության համար ժամկետ սահմանել մինչև 10 օր:

3.2 Օժանդակություն հանրակրթական դպրոցներին.

